

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ
Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի
ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման
2022-2023 ուսումնական տարվա գործողությունների ծրագրի

h/h	Նպատակը	Գործողությունները	Արդյունավետության ակնկալվող գնահատման ցուցիչները	Կատարողական
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ				
1	1.1. ԳԴՀ տնտեսագիտական ֆակուլտետ դիմորդների ներգրավում, աշակերտներին մասնագիտական կողմնորոշման հարցում աջակցության նպատակով տնտեսագիտական մասնագիտությունների վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում: Ուսանողների հավաքագրման մեխանիզմների կատարելագործում:	1. Կազմակերպել առցանց և անցանց հանդիպումներ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցների աշակերտների և համալսարանի դասախոսների ու ուսանողների հետ: 2. Կազմակերպել այցելություններ դպրոցներ, հրավիրել դպրոցականներին համալսարան, նրանց մասնակից դարձնել մասնագիտական կողմնորոշման վերաբերվող միջոցառումներին:	Դիմորդների աճ 60%:	Տնտեսագիտական ֆակուլտետը 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակում կազմակերպել է այցելություններ մարզի երեք ավագ և հինգ 12-ամյա դպրոցներ, Սևանի, Մարտունու, Վարդենիսի քոլեջներ, իրականացվել մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ:
2.	1.2. Ապահովել ուսման բարձր որակ, նորարարություն, արդյունավետ ուսուցում և գրավիչ կրթական միջավայր: Ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպում:	1. Մշտադիտարկել ուսանողների կողմից առարկաների վերջնարդյունքների ամբողջական յուրացման գործընթացը: 2. Կրթական գործընթացը դարձնել բազմաբովանդակ: Կիրառել ուսուցման նոր մեթոդներ, մատուցման նոր եղանակներ, մատուցվող նյութը դարձնել գրավիչ ու հետաքրքիր: 3. Մշակել ուսանողի ինքնուրույն աշխատանքը հսկելու գործիքակազմ: 4. Առաջադիմությամբ հետ մնացող ուսանողների շրջանում դասախոսների կողմից լրացուցուցիչ պարապմունքների կազմակերպում: Առաջարկ շրջանավարտներից	1. Կազմակերպել 4 դասալսում յուրաքանչյուր մասնագիտությամբ: 2. Ուսանողների ինքնուրույն աշխատանքների կատարումն ստուգելու նպատակով անցկացնել 5 առարկայի գծով ուսումնասիրություն քննարկում: 3. Բուհական և միջբուհական գիտաժողովների ուսանողների մասնակցության 60% աճ: Մասնագիտական առարկայական ծրագրերի գործնական հատվածները՝ նշելով բարելավումը բնութագրող ցուցանիշներ:	2022-2023 ուստարում բակալավրիատի ֆինանսներ /ըստ ոլորտի/ բաժնում կատարվել են 6 դասալսում, Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ բաժնում 3 և Տնտեսագիտություն մասնագիտությամբ՝ 4 դասալսում: Կատարվել է վերլուծություն, արդյունքները քննարկվել է ամբիոնների նիստերում: Միջբուհական գիտաժողովներին մասնակցել է 12 ուսանող, նախորդ տարվա 8-ի դիմաց, աճը կազմել է 66 տոկոս: Կոնկրետ առաջադրանքներով համալրելվել են. ֆինանսներ /ըստ ոլորտի մասնագիտությամբ՝ ֆինանսներ, Դրամ, վարկ և բանկեր դասընթացները, Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ մասնագիտությամբ՝ Հաշվապահական հաշվառում, Հաշվապահական հաշվառման ստանդարտներ

		Կարևորել ուսանողների գործնական հմտություններն ու կարողությունները:		դասընթացները, Տնտեսագիտություն մասնագիտությամբ՝ Փոքր ձեռնարկատիրության կազմակերպում, Տնտեսական գործունեության ծրագրավորում դասընթացները:
3.	1.3. Մասնագիտական կրթական ծրագրերի արդիականացում, վերջնարդյունքների համապատասխանեցում գործատուների պահանջներին:	1.Մասնագիտությունների նկատմամբ աշխատաշուկայի պահանջների բազմակողմանի ուսումնասիրում գործատուների շրջանում հարցումների անցկացում: 2.Կրթական ծրագրերը վերանայելիս հաշվի առնել շահեկիցների առաջարկությունները: 3.Կատարել կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն: 4.Ուսումնական ծրագրերը մշակել հաշվի առնելով՝ հաշմանդամություն ունեցող անձանց գնահատված կրթական կարիքները:	1. Տարածաշրջանում գործող ընկերություններում, կազմակերպություններում անցկացնել հարցումներ՝ <ul style="list-style-type: none"> • արտադրական -17 • գյուղատնտեսական-12 • սպասարկման -30 • ֆինանսական-7 • հաշվապահական -12 • այլ-7 	Գործատուների պահանջներին առարկայական ծրագրերի վերջնարդյունքների համապատասխանեցման նպատակով տարածաշրջանի ձեռնարկություններում անցկացվել են հարցումներ. <ul style="list-style-type: none"> • արտադրական -15 • գյուղատնտեսական-8 • սպասարկման -20 • ֆինանսական-7 • հաշվապահական -14 • այլ-2 Վերանայվել են «Ֆինանսներ /ըստ ոլորտի/», Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/, տնտեսագիտություն կրթական ծրագրերը և ըստ բնագավառների քննարկվել շահակիցների հետ: 2022-2023 ուստարում դասախոսների կողմից վերանայվել են առարկայական ծրագրերը և վերջնարդյունքները դրանք համապատասխանեցնելով շուկայի պահանջներին:
4.	1.4. Ուսուցման արդյունավետ մեթոդների և տեխնոլոգիաների կիրառում, կրթական վերջնարդյունքների ձեռքբերման, ուսուցման և գիտահետազոտական գործունեության զուգակցում, ուսանողների համակողմանի դաստիարակության ապահովում, մասնագիտական գործունեության նախապատրաստում:	1.Մասնագիտական առարկաներից ուսանողների բավարարվածության վերաբերյալ անցկացնել հարցումներ: 2.Առցանց դասավանդման հարցաթերթիկները /ինչպիսիք են ինֆոգրամով infogram.com կառուցել գծապատկերներ/: 3. Հետազոտական և պրակտիկայի կապի արդյունավետության բացահայտման նպատակով վերլուծել մագիստրոսական թեզեր:	1. Անցկացնել հարցումներ -- Բակալավրիատի երկրորդ և երրորդ կուրսերում, -Մագիստրատուրայի 1-ին կուրսում 3.Կազմակերպել 2 բաց դաս 4. Տեխնոլոգիաների կիրառմամբ կազմակերպել 2 բաց դաս: 5. Ինֆոգրամով դասավանդել ևս 3 դասախոս-5 առարկայի գծով անցնեն այդ տեխնոլոգիաներին: 6. Մագիստրոսական երեք մասնագիտությունների գծով մեկական թեզի վերլուծություն: 7. Տեխնիկական միջոցների հնարավորությունների օգտագործումը հասցնել առավելագույնի:	Մասնագիտական առարկաներից բավարարվածության, ինֆոգրամով դասավանդման ներդրման և մեթոդական զինվածի բազմազանեցման նպատակով իրականացվել են բաց դասեր: Ինֆոգրամով դասավանդել են ևս 2 դասախոս, 1 ականական առարկայի գծով: Գիտահետազոտության և պրակտիկայի կապի արդյունավետության բացահայտման նպատակով կատարվել է նախորդ տարվա 3 թեզի վերլուծություն: Տեխնիկական միջոցների հնարավորությունների օգտագործումը ավելացել է 30 տոկոսով:

5.	1.5. Գեղարքունիքի մարզի կրթական կարիքների բացահայտում, աշխատաշուկայի ուսումնասիրություն, աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ մրցունակ մասնագետների պատրաստում: ՀՀ Գեղարքունիքի մարզի առանձնահատկությունների հաշվառմամբ դասախոսների և մագիստրոսների գիտահետազոտական գործունեության ուղղորդում:	1. Իրականացնել հարցումներ գործատուների և արտաքին այլ շահառուների շրջանում ուղղված կրթական կարիքների բացահայտմանը և կատարել վերլուծություն: 2. Ավելացնել աշխատաշուկայի պահանջները բավարարող առարկաների գործնական պարապմունքների ժամերը:	1. Անցկացնել կրթական կարիքների ուսումնասիրում՝ 2-բանկերում, 1 -ֆինանսական կազմակերպությունում, 4- ՓՄՁ-ում Գավառի, Սևանի տարածքում: 2. Գործող մասնագիտությունների գծով ելնելով ուսումնասիրության արդյունքներից 2-ական առարկաների մասնագիտական առարկայական ծրագրերում ավելացնել աշխատաշուկայի պահանջներից բխող գործնական պարապմունքներ:	«ՖԻՆՔԱ» ունիվերսալ վարկային կազմակերպության և «Արդշինբանկ» ՓԲԸ «Կամո» մասնաճյուղի աշխատակիցների հետ իրականացվել է կրթական կարիքների ուսումնասիրում: Արդյունքում. <ul style="list-style-type: none"> բանկը ներկայացրել է առաջարկություններ, որոնք քննարկվել են ամբիոնի նիստում առարկայական ծրագրերում փոփոխություն կատարելու առումով: «ՖԻՆՔԱ» ունիվերսալ վարկային կազմակերպությունը առաջարկել է ուշադրություն դարձել ներկայումս գործող վարկավորման նորագույն ձևերի առցանց վարկավարկավորման գործիքակազմերի ուսուցանմանը:
6.	1.6. Մագիստրոսական կրթական ծրագրերի իրականացման գործընթացում հետազոտական կարողությունների զարգացում, գիտական հոդվածների որակի և հրապարակումների բարելավում: Միջազգային գիտահետազոտական հարթակներում գրանցում:	1. Մագիստրոսական թեզերը գնահատել հիմնականում գիտական հետազոտական բաղադրիչի հաշվառմամբ: Ապահովել մագիստրոսական կրթական աստիճաններում առաջատար մասնագետների պատշաճ ներգրավվածություն: Բարելավել գրախոսությունների և կարծիքների որակը, բացահայտել հետազոտական աշխատանքների կիրառական ուղղվածությունը:	1. Շարունակական դարձնել մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների 2 ղեկավար ունենալու պրակտիկան: 2 թեզ ղեկավարեն Նաև գործատուների հանրապետական միության մասնագետներ: Ավարտական աշխատանքին մասնակից դարձնել պրակտիկ մասնագետների:	Մեկ թեզ և մեկ ավարտական աշխատանք ունեցել են 2 ղեկավար: 2023թ. երկրորդ կիսամյակում Գործատուների հանրապետական միության մասնագետները ավարտական աշխատանք կատարողներին տրամադրել են առցանց խորհրդատվություններ և նյութեր:
7	1.7. Գիտահետազոտական գործընթացներում ուսանողներին ինտեգրում, գիտահետազոտական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջավայրի ապահովում: Հետազոտական գործունեության ժամանակակից մեթոդների կիրառում, համակարգված պլանավորում և իրականացում, կրթության և հետազոտության կապի ամրապնդում:	Ակտիվացնել դասախոսների ղեկավարումը ուսանողների կողմից գիտական հոդվածներ պատրաստելու և ապահովելու նրանց մասնակցությունը ԳԴՀ և հանրապետական գիտաժողովներին:	Գիտաժողովներին ուսանողների մասնակցության 40% աճ: 70%-ի հասցնել մագիստրատուրայի ուսանողների մասնակցությունը:	Գիտաժողովներին ուսանողների մասնակցությունը բակալավրիտում նախորդ տարվա համեմատ աճել է 66% -ով, իսկ մագիստրատուրայում աճ չի գրանցվել:
8	1.8. Ուսանողների ակտիվ մասնակցության ապահովում ԳԴՀ իրականացվող միջազգային շարժունության ծրագրերին:	1. Արտերկրում ուսանած ուսանողների հետ հանդիպումը դարձնել ավելի նպատակային և արդյունավետ: 2. Արտերկրում ուսանած և ներկայումս մասնագիտական աշխատանքի անցած	2. Հաճախակի կազմակերպել հանդիպումներ արտերկրում ուսումնառած ուսանողների հետ:	2022-2023 ուստարում միջազգային շարժունության ծրագրերին մասնակցել է 2 ուսանող:

		<p>շրջանավարտների ուժերը օգտագործել աշխատաշուկան ուսումնասիրելիս:</p>		
9	<p>1.9.Ուսանողների գործնական կարողությունների և հմտությունների զարգացման նպատակով ուսումնական, տեղեկատվական ռեսուրսներից արդյունավետ օգտվելու հմտությունների զարգացում, արտադրական պրակտիկաների կազմակերպման և անցկացման արդյունավետության բարձրացում:</p>	<p>1.Վերանայել պրակտիկայի ծրագրերը, ուժեղացնել ծրագրերի գործնական ուղղվածությունը, մասնակից դարձնել գործատուների:</p> <p>2.Պայմանագրեր կնքել նոր, զարգացող ֆիրմաների, կազմակերպությունների հետ:</p> <p>3.Ուսանողներին նախապատրաստել պրակտիկային՝ կազմակերպել հանդիպում շրջանավարտների հետ, կատարել փորձի փոխանակում:</p> <p>Առաջարկ շրջանավարտներից. Հետազոտվող կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները ձեռք բերելու հետ կապված դժվարություններ:</p>	<p>1.2022-2023 ուստարվա առաջին կիսամյակում վերանայել արտադրական պրակտիկաների բոլոր ծրագրերը:</p> <p>2.Թարմացնել կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքումը: Յուրաքանչյուր մասնագիտության գծով 5 նոր պայմանագիր:</p> <p>3.Ուսումնական և արտադրական պրակտիկայի վայրերում անցկացնել հարցումներ, արդյունքները քննարկել ամբիոններում:</p> <p>Պրակտիկայի վայրերի հետ պայմանավորվածություն ձեռք բերելիս տնօրինության հետ նախապես համաձայնություն ձեռք բերել ֆինանսական հաշվետվություններից ուսանողների օգտվելու հնարավորության և մասնագետների կողմից աջակցության համար:</p>	<p>Բակալավրիատի արտադրական պրակտիկայի ծրագրերը վերանայվել են, հաշվի առնելով յուրաքանչյուր մասնագիտության գծով ընդգրկված պրակտիկայի վայրի առանձնահատկությունները:</p> <p>Նոր պայմանագրեր է կնքվել.</p> <p>1.Ֆինանսներ /ըստ ոլորտի/ մասնագիտությամբ՝ 4, 1.Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ մասնագիտությամբ՝ 1, 2.Տնտեսագիտություն մասնագիտությամբ՝ 3:</p> <p>Ուսումնական և արտադրական պրակտիկայի վայրերի 80 % -ում անցկացնել հարցումներ և արդյունքները քննարկել ամբիոններում:</p>
10	<p>1.10.Ամփոփիչ ատեստավորման գործընթացի բարելավում, սովորողների կողմից ձեռքբերված ուսումնական վերջնարդյունքների և մասնագիտական կարողությունների օբյեկտիվ գնահատում:</p>	<p>1.Ամբիոնները հետևեն ավարտական աշխատանքների կատարման ժամանակացույցին,</p> <p>2.Լսել հաշվետվություններ,</p> <p>3. Հետևել ատեստավորման հանձնաժողովի նախագահների կողմից արված առաջակությունների իրականացմանը:</p> <p>Առաջարկ շրջանավարտներից. Ավարտական աշխատանքի ղեկավար նշանակել՝ հաշվի առնելով դասախոսի գիտահետազոտության ոլորտը:</p>	<p>Կազմակերպել ավարտական աշխատանքների քննարկում ընտրված կազմակերպությունների ներկայացուցիչների հետ բակալավրում -4, մագիստրատուրայում-2:</p> <p>Գիտական ղեկավարներ նշանակելիս լուրջ ուշադրություն դարձնել թեմայի հետազոտության ոլորտին, ինչպես նաև հաշվի առնել դասախոսի նախասիրությունը, որակյալ աշխատանք ապահովելու նպատակով:</p>	<p>Կատարվել է ավարտական աշխատանքների քննարկում ընտրված կազմակերպությունների ներկայացուցիչների հետ բակալավրում -3, մագիստրատուրայում-3:</p>
11	<p>1.11.Հեռակա ուսուցման համակարգում տնտեսագիտական կրթության որակի բարձրացում:</p>	<p>Ամբիոններում քննարկել և մշակել միջազգայնում կապած վերջին տարիներին հեռակա ուսուցման ֆակուլտետում, ինչպես</p>	<p>Մասնագիտական 5 առարկայական ծրագրերի ուսումնասիրում, Ուսանողների շրջանում</p>	<p>Ուսանողների շրջանում կատարվել են բանավոր հարցումներ, վերանայվել է հաշվապահական հաշվառման կրթական ծրագիրը:</p>

		մասնագիտական /Հաշվապահական հաշվառում/, այնպես էլ մնացած խմբերում ուսումնառության ընթացքում նկատված բացթողումների և թերությունների վերացման համար:	հարցումների անցկացում:	
2.ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՋԵՆԱՎՈՒԿԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐԿՈՂ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐ				
1	2.1.Ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի /որպես ուսանողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցի/, ուսանողական գիտական ընկերության գործունեության ակտիվացում, «Տնտեսագետների ակումբ»-ի և դրանց գործունեության արդյունավետության բարձրացում:	Ֆակուլտետի ադմինիստրացիայի և ուսանողական կառավարման մարմինների կապի ամրապնդում:	Միջոցառումների անցկացման, հանդիպումների կազմակերպման աճ: Տնտեսագետների ակումբի քննարկումներին հրավիրել գործող ընկերություններից ներկայացուցիչներ: Ֆակուլտետի ադմինիստրացիայի կողմից ուսանողական ինքնակառավարման մարմինների խորհրդատվությունների կազմակերպում և անցկացում:	Ֆակուլտետի ադմինիստրացիայի կողմից իրականացվել են խորհրդատվություններ ուսանողական կառավարման մարմինների կապի ամրապնդման և արդյունավետության բարձրացման նպատակով: Տնտեսագետների ակումբ. 2022 թվականի դեկտեմբեր, 2023թ. փետրվար և մարտ ամիսներին անցկացվել է առցանց դասընթացներ սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, վերլուծաբան Հայկ Թրունյանի կողմից՝ «Վարքագծային տնտեսագիտությունը և ֆինանսները ժամանակակից աշխարհում», «Հաճախորդակենտրոն բիզնես» թեմաներով, որին մասնակցել են 25 ուսանողներ տարբեր կուրսերից: Նախատեսվում է շարունակել այդ դասընթացները:
2	2.2.Ուժեղացնել կապը ուսանողական գիտական ընկերության և ամբիոնների միջև, մշակել միջոցառումներ՝ այն համակարգված դարձնելու, գիտահետազոտական աշխատանքներում ուսանողներին ներգրավելու համար, ՈԻԳ-ի համար ունենալ հաստատված հոդվածների թեմաներ:	Տնտեսագիտական ֆակուլտետի դասախոսների ուժերը նպատակամղել ուսանողների շրջանում գիտահետազոտական հմտություններ ձևավորելու և զարգացնելու համար:	Ուսանողական գիտական ընկերության գիտաժողովների աճ: Ուսանողների ընգրկվածության թվի աճ:	Ուսանողական գիտական ընկերությունը ամբիոնների առաջարկած թեմաներով իրականացրել է 2 ներֆակուլտետային գիտաժողով: Ուսանողների ընգրկվածության թվի աճը կազմել է 55 տոկոս:
3	2.3.Ուսանողների սոցիալական կարիքների բացահայտում, անձնական գործերի թղթային և էլեկտրոնային բազայի համալրում, հասցեագրված սոցիալական օժանդակության ծրագրերի իրականացում:	1. Ուսանողների տվյալների անձնական գործերի էլեկտրոնային բազայի թարմացում, սոցիալական վիճակի տվյալների ներառում 2. Ուսանողների ներգրավում սոցիալական ծրագրերում և հիմնադրամներում:	Ուսանողների տվյալների էլեկտրոնային բազայի թարմացում: Ուսանողների սոցիալական կարիքների մշտադիտարկում, վերլուծություն և խնդիրների լուծում:	Կատարված է
4	2.4.Ուսանողների ռազմահայրենասիրական, հոգևոր-մշակութային, բարոյաթիկական գեղագիտական դաստիարակությանը միտված միջոցառումների, ինտելեկտուալ մրցույթների կազմակերպում:	1. Տարբեր բնույթի միջոցառումների կազմակերպում: 2. Խրախուսման տարբեր միջոցառումներ:	Միջոցառումների ծրագրի առկայություն և իրականացում:	Ուսանողների պրակտիկ գիտելիքների ամրապնդմանը նպաստում է Հայաստանի Հանրապետության տարբեր արտադրական ձեռնարկությունների, ընկերությունների հետ համագործակցությունը, մասնավորապես, այդ հաստատություններում մեկօրյա արտադրական պրակտիկաների կազմակերպումը:

				Մեկօրյա արտադրական պրակտիկա են անցկացրել Վանաձորի «Գլորիա» , «Օվալ պլաստ» ֆաբրիկայում, «Ալեքս տեքստիլ», «Սևանի ծուկ», «Թամարա» կաթնամթերքի արտադրության ընկերություններում:
5	2.5.Ակտիվ քաղաքացիական դիրքորոշում ունեցող, ազգային և համամարդկային արժեքներ կրող քաղաքացիների դաստիարակում, նրանց բարոյականային հատկանիշների զարգացում, ուսանողների շրջանում պատշաճ իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորում:	1. Կազմակերպել քննարկումներ մշակույթի, ստեղծագործական կոլեկտիվների ներկայացուցիչների մասնակցությամբ: 2. Ուսանողների մոտ զարգացնել փոքր դրամաշնորհային ծրագրեր գրելու, սեմինարներ վարելու հմտություններ:	Կազմակերպված միջոցառումների և դրանց մասնակցող ուսանողների թվի աճ 25%-ով, Ծրագրային թիմերի մեջ աշխատող ուսանողների թվի աճ 20%-ով:	Տնտեսագիտական ֆակուլտետում գործող ակումբներում ավելացել է մասնակից ուսանողների թիվը, կազմակերպվել են առցանց հանդիպումներ համապատասխան բնագավառների ներկայացուցիչների հետ:
ՊՐՈՑԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԵՏ ՏԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
1.	3.1.Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների մասնագիտական, մանկավարժական որակների շարունակական բարելավում, վերապատրաստումների անցկացում:	Մանկավարժական հմտությունների զարգացման նպատակով գործարկել դասախոսների վերապատրաստման ծրագրեր: Համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի աշխատակիցների կողմից առցանց գործիքակազմի, տեսակոնֆերանսային համակարգերի օգտագործման վերաբերյալ ուսուցման կազմակերպում:	Դասախոսների 25% -ի վերապատրաստում: Ակտիվացնել և ամրապնդել կապը դասախոսների և գործատուների հետ՝ կազմակերպել հանդիպումներ:	2022-2023 ուսումնական տարում ֆակուլտետի դասախոսները մասնակցել են բուհի ամենամյա 26-րդ գիտաժողովին, հանրապետական և միջազգային գիտաժողովների և ներկայացրել են 9 հոդված: Տնտեսագետների ակումբի կողմից կազմակերպված տարածաշրջանի բիզնեսի ներկայացուցիչների հանդիպումների ժամանակ մասնակից են դարձել Նաև դասախոսական կազմը:
2	2.2.Փորձառու և սկսնակ դասախոսների համագործակցության ապահովում, մենթորության համակարգի կատարելագործում, գիտական աստիճան չունեցող երիտասարդ դասախոսների մասնագիտական աճի խրախուսում, պրոֆեսորադասախոսական կազմի համալրում փորձառու մասնագետներով և երիտասարդ կադրերով:	1. Դասախոսների վարկանիշավորման մեջ կարևորել հետազոտական բաղադրիչը: 2. Մասնակցություն ԳՊՀ և հանրապետական գիտաժողովների: 3. Հոդվածների հրապարակում	1.Մասնակցություն ԳՊՀ և հանրապետական գիտաժողովների /25% աճ/ 2.Հոդվածների հրապարակում /35% աճ/:	10 տոկոսով աճել է փորձառու և սկսնակ դասախոսների գիտաժողովների մասնակցությունը և համատեղ հոդվածների հրապարակումը:
3	3.3.Տնտեսագիտական ֆակուլտետի ամբիոնների գերակա գիտական ուղղությունների հստակեցում՝ ամբիոնի գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների և ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-	1.Ամբիոններում գիտական ուղղությունների ամրագրում, հետազոտական աշխատանքների ծրագրերի մշակում: 2. ՀՀ Գեղարքունիքի մարզի ձեռնարկությունների, կազմակերպությունների	Քննարկվող թեմաների վերաբերյալ կատարել լրացուցիչ ուսումնաախրություններ և ներկայացնել թեմային առնչվող մեկական հոդված: Կազմել դասախոսների և ուսանողների խումբ ՀՀ	Դասախոսների կողմից հրապարակվող հոդվածները համապատասխանեցվել են ամբիոնի գիտական ուղղություններին: Դասախոսների և ուսանողների կողմից կազմված խմբերը տարվա ընթացքում զբաղվել են հնարավորինս ճշտելու Գեղարքունիքի մարզի ձեռնարկությունների, կազմակերպությունների ճյուղային և արդատրական

	տնտեսական արձանձակատվությունների հաշվառմամբ:	կառուցվածքին համապատասխան ուսումնասիրել մասնագիտական կադրերի պահանջարկը:	Գեղարքունիքի մարզի ձեռնարկությունների, կազմակերպությունների կառուցվածքը ուսումնասիրելու համար:	կառուցվածքները:
4	3.4. Դասախոսների մասնակցության միջազգային ծրագրերին:	Ուժեղացնել դասախոսների և ԳԴՀ միջազգային բաժնի կապը:	Ակտիվացնել դասախոսների փոխադարձ հանդիպումները արտերկրում ծրագրերով վերապատրաստված դասախոսների հետ:	Չորս դասախոսներ մասնակցել են միջազգային շարժունության ծրագրերին:
5	3.5. Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական ներուժի լիարժեք օգտագործում, դասախոսների մասնակցությունն որամաշնորհային ծրագրերին:	Աշխատանքային խումբում ընդգրկել նոր դասախոսներ և ակտիվացնել համագործակցությունը հայաստանյան արտասահմանյան բուհերի և կազմակերպությունների հետ:	Ներկայացնել 1 որամաշնորհային ծրագիր: Միջազգային շարժունության ծրագրերին մասնակցության աճ:	Չի կատարվել
4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ				
1.	4.1. Հայաստանի Հանրապետության և զարգացած պետությունների առաջատար բուհերի, այլ կրթական, գիտական հաստատությունների, դաստիարակչական, մշակութային ուղղվածության կազմակերպությունների հետ արտաքին համագործակցային կապերի ընդլայնում:	1. Համագործակցության հուշագրերի կնքում ՀՀ-ում գործող հաստատությունների հետ:	Երկու կազմակերպության հետ փոխըմբռնման հուշագրերի կնքում:	2023թ. հուլիսի 2-ի կնքվել:
2	4.2. «Համալսարան-դպրոց» կապերի ընդլայնում, մանկավարժական խորհուրդների, հետ գործընկերային հարաբերությունների հաստատում: Աշակերտների շրջանում ֆակուլտետի մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրությունն առաջացնող փոխադարձ հանդիպումների և մասնագիտական կողմնորոշմանը միտված տարաբնույթ միջոցառումների կազմակերպում:	1. Այցելություններ Գեղարքունիքի մարզի դպրոցներ: 2. Աշակերտների մասնակցություն համալսարանում կազմակերպվող տարաբնույթ միջոցառումների և բաց դասերի:	1. Դպրոցների աշակերտների և շրջանավարտների հետ հանդիպումների աճ 30%-ով:	Համալսարան-դպրոց կապերի ապահովման և ընդլայնման, աշակերտների շրջանում ֆակուլտետի մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրությունն առաջացնելու նպատակով կազմակերպվել են մասնագիտական կողմնորոշմանը միտված հանդիպումներ, բաց դասեր, դպրոց այցելություններ: Հանդիպումների աճ 40%-ով
3	4.3. Ֆակուլտետի շրջանավարտների միության գործունեության ակտիվացում, միջոցների ձեռնարկում հետադարձ կապն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:	ԳԴՀ ՏՖ շրջանավարտների հետ ունենալ էլեկտրոնային կապ:	Տնտեսագիտական ֆակուլտետի շրջանավարտների միավորումն առաջին հանգամանակում, աշխատաշուկայի հետազոտում, նոր աշխատատեղերի մասնագետ կադրերի պահանջարկի ուսումնասիրում, շրջանավարտների ներգրավում:	8 շրջանավարտներ ներգրավվել են շրջանավարտների միության կազմում: Ակտիվացել է միավորման գործունեությունը աշխատաշուկայի ուսումնասիրության, նոր արտադրություններում աշխատատեղերի ստեղծման վերաբերյալ տեղեկություններին ուսանողությանը և ՏՖ դեկանատին ու ամբիոններին տեղեկացնելու համար:
4	4.4. Հանրապետությունում գործող	Վերանայել Հանրապետությունում	Համագործակցային ծրագրերի	Կատարման ընթացքի մեջ է

	տնտեսագիտական հաստատությունների և ընկերությունների հետ ակտիվ համագործակցության, նրանց հետ փորձի փոխանակման ապահովում, փոխըմբռնման նոր հուշագրերի կնքում և իրականացում:	գործող տնտեսագիտական հաստատությունների և ընկերությունների ցանկը, կազմակերպել այցելություններ և նպատակահարմար գտնելու դեպքում առաջարկել կնքել հուշագրեր:	ակտիվացում	
5	4.5.Հայաստանի գործատուների հանրապետական միության, Հայաստանի հաշվապահների ասոցիացիայի հետ կապերի ակտիվացում, համատեղ ծրագրերի իրականացում:	Հայաստանի գործատուների հանրապետական միության հետ իրականացնել համատեղ ծրագրեր աշխատաշուկայի ուսումնասիրության համար:	Կազմակերպել երկու հանդիպում Հայաստանի գործատուների հանրապետական միության հետ:	Հանդիպումը տեղափոխվել է 2023-2024 ուստարի
5.ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
1.	5.1.Գործատուների ներգրավում կրթական ծրագրերի մշակման, դրանց փորձաքննության իրականացման և շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացներում:	Շարունակել գործատուների աշխատաշուկայի ուսումնասիրության գործընթացը:	1.Երկրորդ կիսամյակի ընթացքում կազմակերպել հանդիպում գործատուների հետ, «կյոյր սեղան»: 2.Գործատուների ուժերով կազմակերպել վարպետության դասեր:	Կազմակերպվել է մեկ «կյոյր սեղան» ֆինասական կազմակերպությունների մասնագետների հետ: Անցկացվել է վարպետության դաս:
2.	5.2.Աշխատաշուկայի կարիքների բացահայտում, արդյունքների վերլուծություն և դրանց ուղղությամբ համապատասխան աշխատանքների իրականացում:	Ուսումնասիրել գործատուների պահանջները և նոր կադրերի պահանջարկը տարածաշրջանում կատարել արդյունքների վերլուծություն:	Անցկացնել երկու հարցում Տարբեր բնագավառների երկուական գործատուների հետ կազմակերպել փոխայցելություններ, սեմինարներ, բանավեճ-քննարկումներ:	Ուսումնասիրվել է նոր բացվող ձեռնարկությունների ցանկը և կազմակերպությունների հետ պարզել նոր մասնագետ կադրերի մասնագիտական պահանջարկը և քանակը: 7 կազմակերպությունների կադրերի պահանջարկի մասին տեղեկատվություն է ներկայացվել ամբիոններ, ինչպես նաև մագիստրատուրայի և բակալավրի ավարտական կուրսերին:
3.	5.3.Շահառուների շրջանում կրթական միջավայրի վերաբերյալ հարցումների անցկացում, կարիքների բացահայտում, թերությունների շտկում, գրավիչ ակադեմիական միջավայրի ստեղծում:	Գործատուներից առաջարկ. Աշխատաշուկայի պահանջների վերաբերյալ առավել հաճախ կազմակերպվեն փոխայցելություններ, սեմինարներ, բանավեճ-քննարկումներ:	Կազմակերպել կյոյր սեղան. 1.արտադրության բնագավառի -1, 2.Ֆերմերային տնտեսություններ-1 3.առևտրի բնագավառ-1	Կազմակերպվել է փոխայցելություններ. 1.արտադրության բնագավառի -1, 2.Ֆերմերային տնտեսություններ-3 /այդ թվում գյուղատնտեսական հումք վերամշակողների 2/, 3.առևտրի բնագավառ-1
6.ՀԱԿԱԿՈՈՒԴՅՈՒՆ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՆ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ				
1.	6.1.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետում հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացում, հակակոռուպցիոն միջավայրի պահպանում, կոռուպցիայի ցանկացած դրսևորման բացառում:	Հետևել ծրագրի իրականացմանը:	Ուսանողների շրջանում հարցումների անցկացում և վերլուծություն	Կատարված է
2.	6.2.ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների պահպանում և իրագործում,	Հետևել ծրագրի իրականացմանը:	Ուսանողների շրջանում հարցումների անցկացում և վերլուծություն	Կատարված է

	տնտեսագիտական դասախոսների և կողմից:	ֆակուլտետի ուսանողների			
3.	6.3.ԳՊՀ Բարեվարքության պահանջների կատարում:	Եթիկայի կանոնների, կանոնների պահպանում և	Հետևել Եթիկայի կանոնների, բարեվարքության նորմերի պահպանմանը:	Ուսանողների շրջանում հարցումների անցկացում և վերլուծություն	Կատարված է

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան՝

Ս. Գ. Ամիրխանյան